ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Աշխարհագրական գիտելիքների միասնացման արդյունքում զարգանում է.**

1) օդերևութաբանությունը
2) ֆիզիկական աշխարհագրությունը
3) քարտեզագրությունը
4) հասարակական աշխարհագրությունը

2 **Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270°:**

1) հյուսիսային
2) արևելյան
3) հարավային
4) արևմտյան

3 **Միջին մասշտաբի քարտեզներ են.**

1) 1:500 000 — 1:10 000 000
2) 1:10 000 — 1:200 000
3) 1:200 000 — 1:1000 000
4) 1:1000 000 — 1:5000 000

4 **Խոշորամասշտաբ այն գծապատկերները, որոնք չունեն աստիճանացանց, կոչվում են.**

1) հատակագիծ
2) աշխարհի քարտեզներ
3) քարտեզագրամ
4) ուրվագծային քարտեզներ

5 **Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 9000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ-ում՝ 9000 կմ
2) 1 սմ-ում՝ 9 կմ
3) 1 սմ-ում՝ 90 կմ
4) 1 սմ-ում՝ 900 կմ

6 **Ի՞նչ է կոչվում ցամաքի որևէ կետի բարձրությունը՝ հաշվված ծովի մակարդակից.**

1) հարաբերական
2) միջին
3) բացարձակ
4) ծանծաղուտ

7 **Հրային (մագմային) ծագման ապար է.**

1) պեմզան
2) ավազը
3) մարմարը
4) տորֆը

8 **Ո՞ր դարաշրջանի ժամանակաշրջան են Տրիասը, Յուրան, Կավիճը:**

1) Մեզոզոյան
2) Պրոտերոզոյան
3) Արխեյան
4) Պալեոզոյան

9 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Ցամաքը դանդաղ տաքանում է և արագ սառչում:
2) Ջուրը դանդաղ տաքանում է և արագ սառչում:
3) Ցամաքը արագ տաքանում է և դանդաղ սառչում:
4) Ջուրը դանդաղ տաքանում է և դանդաղ սառչում:

10 **Մթնոլորտային ճնշումը կախված է.**

1) քամու արագությունից
2) օդի ջերմաստիճանից
3) մթնոլորտային տեղումներից
4) ամպամածությունից

11 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Մորենային թմբերը գետի քայքայիչ աշխատանքի արդյունքում առաջացած մակերևույթի ձևերն են:
2) Հարթավայրերում մակերևույթի բնույթից կախված՝ շատ հստակ է արտահայտվում գետերի ջրբաժան գիծը:
3) Ի տարբերություն հարթավայրային գետերի՝ լեռնային գետերն ունեն փոքր թեքություն:
4) Գետի ծախսը հունի լայնակի կտրվածքով մեկ վայրկյանում անցած ջրի քանակն է:

12 **«Լիճ — սնվող գետ» զույգերից ո՞րն է ճիշտ:**

1) Լադոգա — Ռոն
2) Նյասա — Կոնգո
3) Բայկալ — Լենա
4) Թանա — Նեղոս

13 **Բնութագրումով որոշել զոնան.**

Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր գրեթե չեն աճում, և տարածված են մամուռներն ու քարաքոսները: Ո՞ր բնական զոնան է.

1) տայգա
2) անապատ
3) տունդրա
4) սավաննա

14 **Տափաստանների բնական զոնային բնորոշ է.**

1) հողի բազմամյա սառածությունը
2) ճմապողզոլային հողերի գերակշռությունը
3) ամբողջ տարին կլիմայի չորությունը
4) խոտային բուսականության գերակշռությունը

15 **Ո՞ր կլիմայական գոտում կլիմայական մարզեր *չեն* առանձնացվում:**

1) բարեխառն
2) մերձարևադադարձային
3) հասարակածային
4) արևադարձային

16 **Որո՞նք են երիտասարդ լեռնաշղթաները:**

1) Պիրենեյներ և Էլբուրս
2) Մեծ Զրբաժան և Դրակոնյան
3) Վերխոյանսկի և Չերսկու
4) Տյան Շանի և Սայանների

17 **Ո՞ր նեղուցում գտնվող կղզիների միջև է անցնում ամսաթվի փոփոխման գիծը:**

1) Բոսֆորի
2) Ջիբլարթարի
3) Բերինգի
4) Մոզամբիկի

18 **Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ամենափոքր մայրցամաքն է:
2) Ամենաուշ հայտնագործված մայրցամաքն է:
3) Ամենահարավային մայրցամաքն է:
4) Ամենախոնավ մայրցամաքն է:

19 **Կղզիների ո՞ր զույգը նույն կղզեխմբին *չի* պատկանում.**

1) Իռլանդիա և Իսլանդիա
2) Կուբա և Հայիթի
3) Հոնսյու և Հոկայդո
4) Սումատրա և Ճավա

20 **Որո՞նք են Հարավային Ամերիկայի հարթավայրերը։**

1) Օրինոկոյի և Գվիանական
2) Միջագետքի և Արաբական
3) Կոլումբիական և Լավրենտյան
4) Միսիսիպիի և Մերձատլանտյան

21 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Հարավային Ամերիկայի հարավային մասն ընկած է բարեխառն գոտում։
2) Հարավային Ամերիկան ընկած է հարավային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում։
3) Հարավային Ամերիկան երկրագնդի ամենախոնավ մայրցամաքն է։
4) Հարավային Ամերիկայի կլիմայի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի Ատլանտյան օվկիանոսը։

22 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Կարիբու եղջերուն և բևեռային աղվեսը բարեխառն գոտու լայնատերև անտառների բնորոշ կենդանիներ են։
2) Պուման և մրջնակերը տիպիկ հյուսիսամերիկյան կենդանիներ են։
3) Բիզոնները հիմնականում ապրում են տայգայում։
4) Գորշ արջը և լուսանը տունդրային բնորոշ կենդանիներ են։

23 **Աֆրիկայի միջերկրածովային կլիմայական մարզի գետերը հորդանում են.**

1) յուրաքանչյուր կիսագնդի աշնանը
2) յուրաքանչյուր կիսագնդի ամռանը
3) յուրաքանչյուր կիսագնդի գարնանը
4) յուրաքանչյուր կիսագնդի ձմռանը

24 **Ո՞ր գետը *չի* հոսում Աֆրիկայով։**

1) Շարի
2) Զամբեզի
3) Կոնգո
4) Հոենոս

25 **«Լեռնային համակարգ — լեռնագագաթ» զույգերից ընտրել *ճիշտը*.**

1) Էլբուրս — Դեմավենդ
2) Բալկաններ — Կապուտջուղ
3) Ալպեր — Կոսցյուշկո
4) Ապալաչներ — Ակոնկագուա

26 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Սումատրա և Կալիմանտան կղզիների կլիման մերձհասարակածային է։
2) Արաբական թերակղզու կլիման միջերկրածովային է։
3) Արևմտասիբիրական դաշտավայրի կլիման բարեխառն ցամաքային է։
4) Պիրենեյան թերակղզու կլիման չափավոր ցամաքային է։

27 **Պետական կառավարման ձևը, երբ պետական իշխանության ներկայացուցիչներին ընտրում է ժողովուրդը, իսկ պետության նախագահին՝ պատգամավորները, կոչվում է.**

1) խորհրդարանական հանրապետություն
2) բացարձակ միապետություն
3) նախագահական հանրապետություն
4) սահմանադրական միապետություն

28 **Ո՞ր շարքի բոլոր երկրներն ունեն դաշնային վարչատարածքային կառուցվածք։**

1) Ճապոնիա, Շվեյցարիա, Նիգերիա, Եգիպտոս
2) Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ավստրալիա
3) Կանադա, Բրազիլիա, Գերմանիա, Հնդկաստան
4) Իրան, Լեհաստան, Արգենտինա, Ֆրանսիա

29 **Հայաստանի Հանրապետության քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկություններից *չէ։***

1) խոշոր պետությունների և ուժային կենտրոնների շահերի բախման ոլորտում լինելը
2) համաշխարհային նշանակության բաժանարար գծերի վրա լինելը
3) ռազմավարական գլխավոր դաշնակցի հետ անմիջական սահման չունենալը
4) սահմանակից բոլոր պետությունների հետ դիվանագիտական հարաբերություններ ունենալը

30 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Բարձրադիր լեռնային շրջաններն աչքի են ընկնում բնակչության խտության բարձր ցուցանիշով։
2) Հանքարդյունաբերության և էքստենսիվ գյուղատնտեսության տարածման շրջաններում բնակչության խտության ցուցանիշը ցածր է։
3) Քաղաքակրթության հնագույն օջախներն ավելի խիտ են բնակեցված։
4) Որոշ տարածքներում բնակչության մեծ խտությունը կարող է պայմանավորված լինել բնակչության բնական աճով և ներգաղթով։

31 **Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքի ամենաերիտասարդ ճյուղն է.**

1) ծառայությունների ոլորտը
2) արդյունաբերությունը
3) տեղեկատվական ոլորտը
4) գյուղատնտեսությունը

32 **Քարտեզ 1-ում Ե տառով ո՞ր պետությունն է նշված.**

1) Տաջիկստան
2) Թուրքմենստան
3) Ղազախստան
4) Ուզբեկստան



Քարտեզ 1

33 **Քարտեզ 1-ում Ա տառով ո՞ր ծովն է նշված.**

1) Դեղին
2) Արևելաչինական
3) Ճապոնական
4) Ֆիլիպինյան

34 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Քիմիական արդյունաբերությունը հենվում է բացառապես ներմուծվող հումքի վրա։
2) Բնական գազի պաշարներով գրավում է առաջին տեղը։
3) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում։
4) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Պեչորայի ավազաններում։

35 **Ֆրանսիայի սահմանակից պետություն չէ.**

1) Լիխտենշտայն
2) Գերմանիա
3) Լյուքսեմբուրգ
4) Բելգիա

36 **Սկանդինավյան թերակղզու պետություններից է.**

1) Շվեյցարիա
2) Դանիա
3) Պորտուգալիա
4) Շվեդիա

37 **Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Իրանը և Իրաքը փյունիկյան արմավի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներն են։
2) Լիբանանում զարգացման բարձր մակարդակի է հասել ֆինանսավարկային համակարգը։
3) Տարածաշրջանի տնտեսապես ամենազարգացած պետությունը Իսրայելն է։
4) Թուրքիայի տնտեսության առաջատար ճյուղը նավթարդյունահանումն է։

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը։**

1. Մալի	ա. Լուանդա
2. Անգոլա	բ. Բամակո
3. Զամբիա	գ. Լուսակա
4. Տանզանիա	դ. Դոդոմա

1) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
4) 1-բ, 2-ա, 3-գ, 4- դ

39 **Ո՞ր կղզեխումբն է Օվկիանիայում։**

1) Կուրիլյանը
2) Շպիցբերգենի
3) Պոլինեզիան
4) Ֆոլկլենդյանը

40 **Ո՞ր քաղաքում է տեղակայված Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կենտրոնական գրասենյակը։**

1) Ֆիլադելֆիա
2) Բոստոն
3) Լոս Անջելես
4) Նյու Յորք

41 **Լատինական Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ամենախիտը բնակեցված է Ամազոնի դաշտավայրը։
2) Բնակչությունն աչքի է ընկնում խայտաբղետ ազգային ու ռասայական կազմով։
3) Քաղաքներում շատ են ֆավելաները։
4) Ներկայումս բնակչության կեսից ավելին ապրում են քաղաքներում։

42 **Ի՞նչը բնորոշ *չէ* Հայկական լեռնաշխարհին։**

1) բնական պայմանների մեղմությունը
2) երիտասարդ հրաբխականության ցայտուն արտահայտվածությունը
3) հարակից տարածքների նկատմամբ բարձր դիրքադրությունը
4) վերընթաց գոտիականության լավ արտահայտվածությունը

43 **Ընտրել գետերի այն զույգը, որոնք հոսում են արևմուտքից արևելք ուղղությամբ։**

1) Արգիճի և Արփա
2) Ախուրյան և Քասաղ
3) Դեբեդ և Աղստև
4) Փամբակ և Զորագետ

44 **«Լեռնաշղթա — լեռնանցք» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Վայքի — Վարդենյաց
2) Զանգեզուրի — Սևանի
3) Բազումի — Պուշկինի
4) Վարդենիսի — Որոտանի

45 **Ո՞ր քաղաքներն ունեն 20-50 հազար բնակչություն։**

1) Աշտարակը և Ջերմուկը
2) Վանաձորը և Հրազդանը
3) Նոյեմբերյանը և Բերդը
4) Արմավիրը և Արտաշատը

46 **ՀՀ գյուղական բնակավայրերի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Արարատյան դաշտում գյուղական բնակավայրերն իրար շատ մոտ են, երբեմն՝ միաձուլված։
2) Բարձրալեռնային գյուղերից դեպի քաղաքներ և ցածրադիր բնակավայրեր կատարվող բնակչության ներգաղթ է դիտվել։
3) Խոշոր գյուղերի գերակշռող մասը Սյունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերում է։
4) Լեռնային մասնատված մակերևույթ ունեցող շրջաններում գյուղական բնակավայրերն իրարից հեռու են ու ցրված։

47 **Ո՞ր պնդումն է *սխալ.***

1) ՀՀ տրանսպորտի կառուցվածքում առկա են բոլոր ճյուղերն ու ենթաճյուղերը։
2) ՀՀ-ն ունի տնտեսության բարդ ու բազմաճյուղ կառուցվածք։
3) ՀՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքում հաշվվում է տասից ավելի համալիր ու ճյուղ և հարյուրից ավելի ենթաճյուղ ու արտադրություն։
4) ՀՀ-ում սպասարկման ոլորտը նյութական արտադրության ոլորտից ավելի է զարգանում։

48 **ՀՀ-ում ոչ տեղական հումքի վրա հիմնված արտադրություն է.**

1) ալյումինի
2) ոսկու
3) մոլիբդենի
4) պղնձի



քարտեզ 2

49 **Քարտեզ 2-ում ո՞ր ջրամբարն է նշված Զ տառով:**

1) Շամբի
2) Ախուրյանի
3) Կեչուտի
4) Ապարանի

50 **Քարտեզ 2-ում ո՞ր քաղաքն է նշված Է տառով:**

1) Սևան
2) Ճամբարակ
3) Գավառ
4) Մարտունի

51 **Այն միջոցառումների համակարգը, որի գլխավոր խնդիրը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումն ու վերահսկումն է՝ ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն ապահովելու նպատակով, կոչվում է.**

1) աշխարհահամակարգ
2) կադաստր
3) մոնիթորինգ
4) էկոհամակարգ

52 **Բնական միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության օրինակ է.**

1) բաց եղանակով շինանյութերի արդյունահանումը
2) լանջերի դարավանդավորումը
3) անտառային շերտերի ստեղծումը
4) ջրի օգտագործման փակ ցիկլի ներդրումը

53 **Բուսական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում *չէ*.**

1) անտառային հրդեհների դեմ պայքարը
2) կենսատեխնիկական միջոցառումների իրականացումը
3) հատուկ պահպանվող տարածքների առանձնացումը
4) արոտաշրջանառության կազմակերպումը

54 **Բնության հատուկ պահպանվող տարածք *չէ*.**

1) արգելոցը
2) ազգային պարկը
3) արգելավայրը
4) արոտավայրը

55 **Ո՞ր պնդումն է *սխալ*:**

1) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սմոգը, թթվային անձրևները, աղմկային աղտոտումը:
2) Էկոլոգիական լարվածությունը պատճառ է դառնում էկոլոգիական ագրեսիայի, որն արտահայտվում է թունավոր տեխնոլոգիաներն ու թափոններն այլ երկրներ տեղափոխելով:
3) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:
4) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:

56 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են երկաթաքարի արդյունահանմամբ.**

1) Մեքսիկա
2) Գերմանիա
3) Բրազիլիա
4) Ավստրալիա
5) Արգենտինա
6) Ինդոնեզիա
7) Իտալիա
8) Թուրքիա

57 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բամբակի արտադրությամբ.**

1) Վրաստան
2) Կանադա
3) Ռուսաստան
4) Իրան
5) Գերմանիա
6) Չինաստան
7) Պակիստան
8) Ֆրանսիա

58 **Գրել այն մշակաբույսերի համարները, որոնք տեխնիկական են.**

1) աշորա
2) ցորեն
3) բրինձ
4) գարի
5) սուրճ
6) սոյա
7) եգիպտացորեն
8) բամբակենի

59 **Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ատոմային էլեկտրակայաններին.**

1) Բրազիլիա
2) Ռուսաստան
3) Թուրքիա
4) Կանադա
5) Չինաստան
6) Իրան
7) Ֆրանսիա
8) Ճապոնիա

60 **Գրել ՀՀ-ում թվակազմանակով առաջին և երկրորդ տեղերը զբաղեցնող ազգային փոքրամասնությունների համարները.**

1) եզդիներ
2) հույներ
3) ռուսներ
4) ասորիներ
5) արաբներ
6) ուկրաինացիներ
7) վրացիներ
8) պարսիկներ

61 **Գրել ՀՀ ցեմենտի արտադրության կենտրոնների համարները.**

1) Վաղարշապատ
2) Արտաշատ
3) Արարատ
4) Երևան
5) Գորիս
6) Գյումրի
7) Հրազդան
8) Արթիկ

62 Տրված պետությունները դասավորել տարածքի մեծության նվազման կարգով:

1) ԱՄՆ
2) Չինաստան
3) Ռուսաստան
4) Կանադա

63 ՀՀ տրված գետերի համարները դասավորել դրանց թեքությունների աճման կարգով.

1) Մեծամոր 2) Հրազդան 3) Ողջի

(64 - 65) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է (հաշվարկ կատարել 5°-ով).

64 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

65 Որոշել օդի ջերմաստիճանը լեռան գագաթին:

66 Օդի բացարձակ խոնավությունը 12 գ/սմ³ է, իսկ հագեցման համար անհրաժեշտ խոնավությունը՝ 30 գ/սմ³: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

(67-68) Երկրի բնակչության թիվը 40 մլն. է, գյուղաբնակների բացարձակ թիվը՝ 16 մլն., իսկ տարածքի մակերեսը 200 հազ. կմ².

67 Որոշել բնակչության միջին խտությունը:

68 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

69 **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Շերամապահությամբ հնարավոր է զբաղվել այնտեղ, որտեղ աճում է թթենին։
2) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը։
3) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և թռչնաբուծությունը։
4) Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը, որին հաջորդում են Բրազիլիան, Չինաստանը և ԱՄՆ-ն։
5) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար տեղ են գրավում Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան։
6) Ոչխարաբուծությունը զարգանում է հզոր համալիրներում, որոնք կառուցվում են բնակչության խիտ բնակեցված շրջաններում։

70 **ՀՀ թեթև արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Մարալիկում կա բամբակամանվածքային ֆաբրիկա, որը մասնակիորեն է աշխատում։
2) Ճյուղի երիտասարդ ենթաճյուղերից է կոշկագործությունը։
3) Գորգագործությունը չունի արտահանման նշանակություն։
4) Գյումրին տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն է։
5) Ճյուղն աշխատատար է։
6) Կարի արդյունաբերությունը թեթև արդյունաբերության ենթաճյուղերից ամենացրված տեղաբաշխումն ուներ։